ՆՈՐԱՅՐ ԲԱԳՐԱՏԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Կյանքի 83-րդ տարում կյանքից հեռացավ վաստակաշատ պատմաբան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի առաջատար գիտաշխատող Նորայր Բագրատի Սարուխանյանը:

Նորայր Սարուխանյանը ծնվել է 1935 թ. մայիսի 1-ին Գորիսի շրջանի Տեղ գյուղում: 1953 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1963 թ. հոկտեմբերի 1-ին ընդունվել է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան:

1961 թ. սեպտեմբերից մինչև 1963 թ. հոկտեմբերի 1-ը աշխատել է ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր Ռադիոհեռուստապետկոմի պրոպագանդայի խմբագրությունում որպես ավագ խմբագիր:

1968 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ "Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացման պրոբլեմը մինչհեղափոխական հայ պատմագրության մեջ" թեմայով:

1970 թ. աշխատել է ԳԱ պատմության ինստիտուտում, սկզբում՝ կրտսեր, այնուհետև՝ ավագ գիտաշխատող: 1970–1984 թթ. աշխատել է "Խորհրդային Հայաստան" օրաթերթի խմբագրի առաջին տեղակալ:

1986–1991 թթ. վարել է "Հայգիրք" հանրապետական վարչության տնօրենի պաշտոնը: 1991–1993 թթ. աշխատել է ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի գիտական քարտուղար:

1998 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ "Հայկական հարցը մինչխորհրդային հայ հասարակական-քաղաքական մտքի և պատմագրության մեջ" թեմայով:

Մի շարք մենագրությունների և տասնյակ գիտական հոդվածների հեղինակ է:

Բազմահմուտ պատմաբանի, հրաշալի ընկերոջ և մարդու հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում: Վշտակցում ենք հանգուցյալի հարազատներին անդառնալի կորստյան առթիվ:

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ